

ԾԱՂՐԱԿԱՆ ԵՐԳԵՐ

1 ՉՈՒԲԱՌ ՏԱՆԱՆ

Զուբառ տանան մոշթեցին,
Գաշին թուլուփ հանեցին,
Բոշը բոռոզա խոշտեցին,
Գոդոշը սանդղո դաշեցին,
Զոփը յաթմա խոշտեցին,
Դարին բազար ձախեցին,
Հինգ-դասը քապիկ պոնեցուցին,
Շաբիք-վարդիք գնեցին,
Դարին գնիգնեցուն գարեւ դվին,
Գիշերը փսագ կնացին,
Լուսու հարսնիք կնացին,
Հարսին անունը խալ խոռոզ,
Փեսինը՝ գալանսկի խոռոզ:

2 ԳՐՅԴԸ-ԳՐՅԴԸ

Գըյդը, դըյդը հաշերես,
Յալին գեշթա՝
Փադ չիկա
Զորխախ գեշթա—
Ճուր չիկա.
Դուն կուկա՝
Մաշդ չիկա,
Փիլեթին դագը՝
Փադ չիկա,
Պրինձ փիլավին՝
Եզ չիկա.
Խնամիներուն՝
Դեղ չիկա,
Ջեբը գըմդեն՝
Ստագ չիկա¹:

3

(Տարբերակ)

Գըզգո-գըզդո հաշերես,
Մորին կնաց՝

¹ Այս երգի նոտագրական տարբերակը տե՛ս սույն գրքում, Մ. Լյուկենյանի ժողովածուն:

Փադ չիկա.
Զորվախ կնաց՝
Ճուր չիկա.
Խավիժ էփելու՝
Եղ չիկա.
Փիլաֆ անելու՝
Պրինձ չիկա.
Խնամիներուն՝
Դեղ չիկա:

Այս երգի տարբերակի «մորի» և «չոր-վախ» խոսքերը ցույց են տալիս նրա դրիմ-յան ծագումը: Ղրիմում հայերը փայտ կըտ-բելու գնում էին «մորի» (անտառ): Նախիջ-վանը անտառներ չունեին, նրա բնակիչները փայտ գնելու համար գնում էին «յալին» (գե-տափը), դրա համար այս երգի նախիջևն-ցոց տարբերակում ասված է՝ «յալին գնաց»: Ղրիմի տարբերակը փոփոխության է ենթարկ-ված նոր նախիջևանի տեղական պայման-ների համեմատ:

4

Այսօր տուար մառող է,
Հարսին անունը խոռոզ է,
Փեսին անունը Նիգողոս է,
Գնքահարը՝ շալ-խոռոզ,
Գնքամարը՝ հավ-ֆեռիկ:
Շունին արբան լձեցին,
Հարս ու փեսին նստեցուցին,
Առին, դարին Սուրբ Նիգողոս.
Փսագողը դեր Բողոս,
Նացա առջևը խոզի միս,
Վրան ցանած գալի թիս²:

5

Պուք կուկա, պուք կուկա,
Պուքին դադեն մուգ կուկա.

² Գալի թիս, սունկի մի տեսակ է, սեղանի համար անպետք: Զորանալուց հետո գլուխը դառնում է փռշի, որ ունի շատ անախորժ հոտ:

Կնացեք, նայեցեք, վո՞ւ կուկա.
— Օվանես աղան դուն կուկա,
Փեշին դագեն կեշ ֆոդ կուկա,
Զոցին դագեն վաշդի ֆոդ կուկա³:

6

(«Փառացի փառս» եկեղեցական
երգի եղանակով)

Զայն արարյալ գենսարարին
Ֆայդա շունիմ, զարար գանիմ.
Գե՛ր, գե՛ր միսին խառումայեն,
Ի՞նչ անուշ է սուդաք կինին.
Եվութ և ժամ և գիշերի.
Դաուլ, զուռնա գելի-շելի.
Ացլուկ-մացլուկ,
Պոնն ձեռքեն գամացուգ:

7

Այու, այու, դեէ,
Դունը յալիեն վեր է.
Տիրացիներն իննադին,
Սամսան փուռը գերին:

8

Կուցա մալի,
Ռոստով-յալի,
Զաքա-շուքա,
Գեշթա-կուկա:

9

Փըպլոնգ արավ—
Բադոնցավ.
Շոռ արավ—
Վազեցավ:
Մարն ալ գուլա,
Դղան ալ գուլա,
Աղն ալ պերեք,
Դոպուան ալ պերեք:

10

Զընգո-զընգո չալի,
Մեծ բարոնին հարսին,
Գելլե, գեշթա հոռոմնագ,
Մաղը գըֆսե ջուհուդնագ:
Ժամը գեշթա, տուռ չիկա,
Մոմ վառելու դեղ չիկա,
Գալաջի անելու մաշդ չիկա,
Էրեսին վրան՝ նամուս չիկա:

³ Այս երգի նոտագրված օրինակը տե՛ս սույն
գրքում, Մ. Լյուկեճյանի ժողովածուն:

11

Տուն աղա իս, խելոք գիշվիս,
Որովհեղև փող շադ ունիս.
Դո՛ւր քո փողդ մեզ ուրիշին,
Տուն ալ կըլլաս իմ խելքիս.
Պարե դուդան, ուրադ նոր է,
Ի՞նչ ֆայդա, գուդդ մեծ է...

Այս երգի շարունակությունը չհաջողվեց
գտնել: Երգի հեղինակն է Մեծ Սալա գյուղի
շառխըճի Կարապետ Սերոբի Երկանյանը: Նա
նվագել է մի հարսանիքում, որտեղ հյուրերի
մեջ եղել է կալվածատեր Համբարձում Դոմ-
բայանը: Վերջինս կիսածաղրով դիմել է
նվագողներին և ասել՝ «Շախաջի իս, ասա
մեզ նոր պան, ցուցուր շնորքդ»: Դրա պա-
տասխանը եղել է այս երգը, որ սաստիկ դի-
պել է կալվածատիրոջ ինքնասիրությանը և
նա թույլ չի տվել երգողին վերջացնել իր
երգը:

Շառխըճի Կարապետը մեռել է երիտա-
սարդ հասակում. նա ունեցել է երգերի հա-
մար առանձին տետրակ, որը նրա մահվանից
վերջը անցնելով ձեռքից-ձեռք, չքացել է: Ազ-
գականների մոտ չկա, բայց ամենքն էլ գի-
տեն, որ նա ունեցել է այդպիսի տետրակ:
Մեզ հաջողվեց երաժշտագետ Մ. Լյուկեճյա-
նից ստանալ մի քանի տարբերակ, որը տա-
լիս ենք ստորև:

* * *

Գարաբեդ աղան հարսնիք եգավ,
Տուռին դակը գայնեցավ,
Նա ալ գիդերքի բադարագ էր,
Գաթա ու բիդա բիդ ուդեր:
Գարաբեդ աղան խառչենի կնաց.
Բոռը գերավ, բըլխը լոգից,
Տուռին դագը գայնեցավ.
Նա կիդեր քի բադարագ էր,
Գաթայի ջամփա գընայեր:
Անիսե գաթայի ֆոդն ալ չիկար,
Սիրդը խոցից. պերանը կոցից,
Առանց գաթայի դուն եգավ,
Գընգանմեն ալ գուե գերավ,
Քիչ մնաց որ ձեռք ալ ուդեր:

* * *

Դեսոք թո ըլա, թո չըլա,
Թեք ստագը բոլ թո ըլա,
Ադ ախչգանը մարը
Իմիս բիանաս թո ըլա:

ՀԱՋԻ ՊԵՏՈՒՇԻՆ ԵՐԳԸ

Հաջի Պետուշը քավալեռ,
Զալին օշթան բառգիլ էր.
Թողութին արա ինձի յանգա,
Վարդիքս նեղ էր, վար ինգա:

* * *

Յաթմա, թեզաք զըմրըղայ,
Զարկ շամառը, փեղե ըըյըխը,
Հաքուր անգաջին, հեծիր գոնագը,
Դրորե փորը, գոխե ոտքը,
Եղե դարանդ, շուտ փախիր: